

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԵՐ

ՀՀ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԸ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ*

ԱՏՈՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ՍՈՒՄԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գիտելիքը միշտ եղել և մնում է հիմնարար արժեք բոլոր ժամանակներում և տարբեր մշակույթներում: Մակայն գիտելիքահենք տնտեսության ձևավորման անհրաժեշտությունը դարձել է ներկայիս տնտեսական զարգացման հիմնապայմաններից մեկը: Տնտեսական զարգացումը մշտապես պահանջում է նոր գաղափարների և տեխնոլոգիաների շարունակական հոսքեր: Այսօր ակնհայտ է, որ նորությունները և հասարակության ստեղծագործական ներուժը պայմանավորում են երկրների ու տնտեսությունների մրցակցային կարողականությունը: Ընդ որում՝ նորարարության ու առաջընթացի սերտ փոխկապվածության խնդիրները դեռ երբեք այսքան ինտենսիվորեն չեն քննարկվել: Դիտարկման ու լուրջ հետազոտության առարկա են դարձել նաև մտավոր սեփականությունը և դրա պաշտպանվածության հետ կապված գիտագործնական հիմնահարցերը:

Մտավոր սեփականությանն (ՄՍ) առնչվող հիմնահարցերի համալիր կարգավորումը ժամանակակից պայմաններում ցանկացած զարգացած և զարգացող տնտեսության քաղաքականության անբաժան մասն է կազմում: Մտավոր սեփականությունը ներկայումս հանդես է գալիս որպես յուրաքանչյուր պետության կարողությունների աճի արդյունավետ գործոն և իր ուրույն ազդեցությունն ունի տնտեսական, մշակութային և ռազմական ոլորտներում: Մտավոր սեփականության հիմնախնդիրների նկատմամբ վերաբերմունքն այսօր պետության ընդհանուր իրավակարգի և վարվող տնտեսական քաղաքականության խոստուն ցուցանիշն ու այցեքարտն է: Զույգահարմար քննարկում հունքի պաշարներ և գտնվելով տնտեսական շրջափակման մեջ՝ ՀՀ-ի համար ավելի քան արդիական է գիտելիքահենք տնտեսության ձևավորումը, հետևաբար և մտավոր սեփականությանն առնչվող հիմնահարցերի քննարկումն ու այս ոլորտի բարելավմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը:

Խորհրդային Միության ողջ ժամանակաշրջանում Հայաստանի իրավաբանական անձանց և գյուտարարների անունով գրանցվել է մոտ 10.000

* Հղվածքը պատրաստվել է ՀՀ ԿԳ ԳՊԿ և ՀՀԲՀ համատեղ ֆինանսավորմամբ իրականացվող 11Բ-09 «ՀՀ և Բելառուսի շուկայի սուբյեկտների գործունեության միջազգայնացումը՝ ուղղված երկու երկրների տնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներդրումն, ադապտացմանը և ներդրմանը» միջազգային հետազոտական թեմայի շրջանակներում:

գյուտ: ԽՍՀՄ փլուզումից հետո հանրապետությունում քայլեր կատարվեցին արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանությունն ապահովող պետական լիազորված մարմնի կազմավորման և մտավոր սեփականության ոլորտը կարգավորող իրավական դաշտի ստեղծման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության պահպանության ազգային համակարգ սկսել է ձևավորվել 1992 թ. հունվարին Կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության և 1993 թ. դեկտեմբերին հեղինակային իրավունքի ազգային գործակալության ստեղծմամբ: Հետագայում՝ 2002 թ. մարտին, այս երկու մարմինների միաձուլմամբ կազմավորվեց մտավոր սեփականության գործակալությունը, որն ունի էկոնոմիկայի նախարարության կազմում գործող առանձնացված ստորաբաժանման կարգավիճակ: Նույն թվականին Կառավարությունը հաստատեց գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը¹, որը մինչ օրս մնացել է անփոփոխ:

Մտավոր սեփականության գործակալության պատասխանատվության ներքո մշակվում են տարեկան հաշվետվություններ, որտեղ ներկայացված են գյուտերի և օգտակար մոդելների վիճակագրությունը, ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների ամփոփումը, ինչպես նաև ֆիրմային անվանումների և լիցենզային ու զիջման պայմանագրերի գրանցման մասին տեղեկատվությունը:

Արձանագրենք, որ ՀՀ-ն անդամակցում է ՄՍ բնագավառին վերաբերող միջազգային պայմանագրերի մեծ մասին (Փարիզյան, Բեռնի, Հռոմի, Ժնևի և Բրյուսելի կոնվենցիաներ, Մադրիդյան համաձայնագիր, Բուդապեշտի պայմանագիր, Արտոնագրային համագործակցության մասին պայմանագիր, Ապրանքային նշանների, գյուտերի և արդյունաբերական նմուշների դասակարգմանը վերաբերող Նիցցայի, Ստրասբուրգի և Լոկառնոյի համաձայնագրեր, ՄՄՀԿ հեղինակային իրավունքի մասին պայմանագիր և ՄՄՀԿ կատարումների և հնչյունագրերի մասին պայմանագիր և այլն): Հայաստանի և Եվրոմիության միջև կնքված «Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը», որն ուժի մեջ է մտել 1999 թ., ընդգծում է ՄՍ իրավունքների պաշտպանության կարևորությունը գործարարության ու ներդրումների ոլորտում:

ՀՀ մտավոր սեփականության համակարգի կարգավորման նպատակով ընդունվել և գործողության մեջ են դրվել մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնցից կարելի է առանձնացնել.

- «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը,
- «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքը (ներկայումս վերանայման փուլում է, նպատակն է՝ ընդգրկել բիոտեխնոլոգիական գյուտերին և դեղագործությանը վերաբերող

¹ Տե՛ս ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալություն (տարեկան հաշվետվություն), 2002 թ. <http://www.aipa.am/am/>

դրույթներ, վերանայել օգտակար մոդելների արտոնագրաունակության պայմաններն ու համարժեք արտոնագրերի տրման գործընթացը և այլն),

- «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը (ուժի մեջ է մտել 2010 թ. հուլիսին և լիովին համապատասխանում է ԵՄ չափանիշներին),

- «Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության» մասին ՀՀ օրենքը:

ՀՀ մտավոր սեփականության օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հիմնականում համապատասխանում է միջազգային չափորոշիչներին: Այս հանգամանքը, թերևս, պայմանավորված է Առևտրի համաշխարհային կազմակերպությանը ՀՀ անդամակցությամբ ու այլ միջազգային պարտավորություններով: Սակայն վերը նշված օրենքների բովանդակային վերլուծությունը վկայում է, որ դրանցում մտավոր սեփականության տարատեսակ օբյեկտների հատկորոշման (սպեցիֆիկացման) խնդիրները ոչ միշտ են օպտիմալ լուծումներ ստացել, ինչը թույլ չի տալիս լիարժեքորեն իրացնել գիտական և տեխնոլոգիական նորույթների ստեղծման ու առևտրայնացման գործընթացի բոլոր մասնակիցների շահերը:

Արտոնագիրը պետության կողմից տրված վկայական է, որը ամրագրում է գյուտի, արդյունաբերական նմուշի, օգտակար մոդելի սեփականության իրավունքների ամբողջությունը և հաստատում է դրանց առաջնայնությունը, հեղինակությունը և բացառիկ իրավունքը: Արտոնագիրը արտոնագրատիրոջը տրամադրվում է որոշակի ժամկետով, որի առավելագույն տևողությունը, որպես կանոն, մինչև 20 տարի է: Արտոնագրի գործողությունն ուժի մեջ պահելու համար անհրաժեշտ է որոշակի ժամկետներում վճարել օրենքով սահմանված պետական տուրքերը:

Արտոնագրերին վերաբերող միջազգային օրենսդրության դիտարկումը ցույց է տալիս, որ մտավոր սեփականության օբյեկտների ստեղծման անմիջական սուբյեկտների և գործատու համարվող կազմակերպությունների, ինչպես նաև երրորդ կողմ հանդիսացող սուբյեկտների (պետություն, հիմնադրամներ, այլ ներդրողներ) հարաբերությունների կարգավորման միասնական, միօրինակ մոտեցումներ գոյություն չունեն: Նայած իրավիճակին՝ որպես սեփականատեր կարող է հանդես գալ գյուտարարը, կազմակերպությունը կամ պետությունը, կամ էլ կարող է գործել բաժնային (համատեղ) սեփականության սկզբունքը: Օրինակ՝ որոշ երկրներում (Կանադա, Ֆինլանդիա, Իտալիա, Իռլանդիա) ընկերությունում ստեղծված գյուտի սեփականատեր է դառնում հենց դրա հեղինակը՝ գյուտարարը, իսկ այլ երկրներում (Իսրայել, Հարավային Կորեա, Մեքսիկա, Լեհաստան, Մեծ Բրիտանիա)՝ գործատու ընկերությունը: Որոշ երկրներում կիրառվում է համատեղ սեփականության տարբերակը (Ավստրիա, Բելգիա, Շվեդիա, Ֆրանսիա, Ճապոնիա):

Հայաստանի Հանրապետությունում, ըստ «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի՝ կազմակերպություններում ստեղծված գյուտի սեփականատեր է ճանաչվում գյուտարարը, իսկ համահեղինակության սկզբունքը չի կիրառվում ոչ ստեղծագործական բնույթի օժանդակության դեպքում: Այս մոտեցումը, թերևս, այնքան էլ արդյունավետ լուծում չէ ու չի նպաստում գիտահետազոտական և նորա-

րարական գործունեության զարգացմանը: Առավել նախընտրելի կլինի այնպիսի մոտեցումը, ըստ որի ընկերություններում ներգրավված նորարարները կամ հետազոտողները ճանաչվեն ստեղծված գյուտերի և օգտակար մոդելների բացառիկ սեփականատեր, պայմանով, որ տրված արտոնագրերը լիցենզային պայմանագրերով փոխանցելու կամ իրավունքները վաճառելու դեպքում կազմակերպությունը ևս որոշակի մասնաբաժին ստանա: Դա կարելի է ամրագրել համապատասխան պայմանագրով: Այս սկզբունքը, կարծում ենք, մի կողմից՝ պետական կամ մասնավոր կազմակերպություններում ներգրավված ստեղծագործական կարողություններ ունեցող անձանց կտրամադրի առավել ինտենսիվ նորամուծային աշխատանքի, մյուս կողմից՝ չի ոտնահարի կազմակերպության շահերը:

Որպեսզի վերը նշված նորմը գործի լիարժեքորեն, կարելի է առաջարկել ներդնել, այսպես կոչված, հարկադրական լիցենզավորման օրենսդրական դրույթը: Այն դեպքերում, երբ արտոնագրի տրամադրումից հետո որոշակի ժամանակահատվածում տվյալ գյուտը կամ օգտակար մոդելը չեն օգտագործվի արտոնագրատիրոջ կողմից, ընդ որում՝ եթե արտոնագրատերը հրաժարվի կնքել լիցենզային պայմանագիր, ապա երրորդ կողմի պահանջով, որը պատրաստ է օգտագործել արտոնագրված գյուտը, դատարանը կարող է հարկադրել արտոնագրատիրոջը արտոնագրի լիցենզիան տրամադրել հայցորդին:

Մտավոր սեփականության օբյեկտները, ըստ կարգավորման ռեժիմի, դասակարգվում են երեք խոշոր խմբի.

1. Արդյունաբերական սեփականության օբյեկտներ, որոնք ներառում են գյուտերը, արդյունաբերական մոդուլները, սպրանքային և սպասարկման նշանների վկայագրերը, օգտակար մոդելները, միկրոսխեմաների տոպոլոգիաները, համակարգչային ծրագրերը, նոր սորտերի, բուսատեսակների, միկրոօրգանիզմների սերմնաբջիջների արտոնագրերը և այլն:

2. Արտադրական, առևտրային և ծառայողական գաղտնիք պարունակող գաղտնի տեղեկություններ, որոնք ընդգրկում են արդյունաբերական նոու-հաու-ները (know-how), մասնագիտական գաղտնիքներ, անձնական հմտություններ, որոնք առևտրային և ֆինանսական օգուտներ են ապահովում, որակի կառավարման, արտադրության կազմակերպման և կադրերի ղեկավարման ու ուսուցման համակարգեր, վաճառքի ցանցեր, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական ավարտուն մշակումներ, որոնք համապատասխան ձևով փաստաթղթավորված են և այլն:

3. Հեղինակային և համահեղինակային իրավունքի օբյեկտներ: Դրանց մեջ մտնում են գիտական աշխատությունները, գրականության, արվեստի և երաժշտական ստեղծագործությունները, ճարտարապետական նախագծերը, ձայնագրումները, տեսաֆիլմերը, տվյալների բանկերը և այլն:

Նկատենք, որ այս կամ գյուտի, հայտնագործության և այլ մտավոր աշխատանքի արդյունքի արտոնագրային գրանցումը ոչ միայն նպաստում է դրանց տերերի ջանքերի համարժեք փոխհատուցմանը, այլև ազդանշան է դառնում այդ ոլորտի մյուս հետազոտողների համար՝ նույնը չկրկնելու: Մյուս կողմից՝ եթե ցանկալի տեխնոլոգիան արդեն առկա է, ապա արտոնագրված նորույթը կարող է խթանել մրցակիցներին՝ կատարելագործելու

արդեն արտոնագրով պաշտպանված տեխնոլոգիան: Բնականաբար, այդ ընթացքում վերջիններս իրենց հետազոտությունների մարկետինգային ռազմավարությունը մշակելիս չեն կարող հաշվի չառնել դա:

Միևնույն ժամանակ, որևէ ֆիրմայի արդյունաբերական քաղաքականությունը մշակելիս արտոնագրի առկայությունը կարևոր կողմնորոշիչ է: Այստեղ կարևոր են ոչ միայն արտոնագրված տեղեկությունները, այլև գրանցված արդյունաբերական սեփականության այլ օբյեկտներ, մասնավորապես՝ ապրանքային նշանները, տոպոգրաֆիկ և ինտեգրալային սխեմաները և այլն: Արտոնագրված գյուտերը, լինելով մտավոր սեփականության արդյունքներ, մի կողմից՝ մասնավոր ապրանքներ են, քանի որ դրանց ստեղծումը ենթադրում է մտավոր և ֆիզիկական ռեսուրսների այլընտրանքային օգտագործման բացառում, այլ կերպ ասած՝ դրանք այլևս չեն կարող օգտագործվել կամ սպառվել այլ բարիքների ստեղծման գործընթացում: Մյուս կողմից՝ արդեն գրանցված (արտոնագրով պաշտպանված) գյուտերը վերածվում են հասարակական բարիքների այն բանից հետո, երբ, իբրև տեղեկություն, հասարակության համար դառնում են մատչելի: Այդ դեպքում դրանք կարող են օգտագործվել առանց հեղինակներին վնաս հասցնելու, իհարկե՝ նախատեսված ընթացակարգերի սահմաններում: Դա նաև նշանակում է՝ այն անձը կամ ընկերությունը, որ ստեղծում է այդ ապրանքը, չի կարող մինչև վերջ ամբողջությամբ օգտվել դրա հնարավորություններից:

Անշուշտ, հասարակական ընտրության տեսանկյունից այստեղ որոշակի երկակիություն կա, որից ելքը ճիշտ օրենսդրական լուծումներ գտնելն է: Արտոնագրային օրենսդրությունը, այս իմաստով, պետք է մի կողմից՝ ամրագրելով հեղինակների ստեղծման գործընթացները, մյուս կողմից՝ հնարավորություն տա դրանց արդյունքներից օգտվելու շուկայի առավելագույն թվով սուբյեկտների: Այս առումով չափազանց կարևոր է, թե քանի տարով է արտոնագրով պաշտպանվում տվյալ գյուտը, հայտնագործությունը և այլն:

Գյուտի կամ հայտնագործության արտոնագրային պաշտպանությունը այն մեխանիզմն է, որով երաշխավորվում է ոչ միայն դրա ստեղծման վրա ծախսված նյութական և մտավոր ռեսուրսների վերականգնումը, այլև շահույթի ստացումը: Այդ իմաստով՝ խելամիտ ու հավասարակշռված արտոնագրային քաղաքականությունը մի գործիք է, որով ապահովվում է գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների շարունակականությունը և ներդրումների հետագա ներգրավումը նորամուծային ծրագրերի մեջ: Արտոնագիրը, փաստորեն, որոշակի ժամանակահատվածում նորամուծության տիրոջը երաշխավորում է դրա բնականոն առևտրայնացումը, երբ տեղի է ունենում նոր տեխնոլոգիայի սահուն հարմարեցումը գործարար միջավայրին, կամ էլ հարուցում է նոր գործարարություն:

Այսպիսով՝ ազգային արտոնագրային համակարգը թույլ է տալիս նորամուծությունների հետ կապված մի շարք խնդիրներ լուծել, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

ա) նպաստում է նոր տեխնոլոգիաների, արտադրանքի, գյուտերի ու հայտնագործությունների ստեղծմանը,

բ) ստեղծում է նպաստավոր իրավական միջավայր նորամուծության մեջ ներդրումներ անելու ու դրա հիման վրա արդյունաբերական քաղաքականություն իրականացնելու համար,

գ) դառնում է գյուտերի և հայտնագործությունների փոխանցման ու առևտրայնացման ուժեղ խթանիչ,

դ) դրա հիման վրա ձևավորվում է արդյունաբերական ծրագրավորման գործընթացը, քանի որ ավելի կանխատեսելի է դառնում նոր տեխնոլոգիաների մեջ արված ներդրումը:

Համակողմանիորեն մշակված ազգային արտոնագրային օրենսդրությունը, ըստ էության, զգալիորեն նվազեցնում է նորամուծություններում կատարված ներդրումների ռիսկը, հիմքեր է ստեղծում, որպեսզի նոր տեխնոլոգիան փոխանցվի գործարքի պայմանագրի հիման վրա, ու միայն վերջինիս միջոցով երաշխավորվի երրորդ անձանց կողմից դրա ապօրինի կրկնօրինակման բացառումը: Մյուս կողմից՝ արտոնագրի առկայությունը նվազեցնում է նոր տեխնոլոգիան ստացողի (գնողի) ռիսկը, քանի որ այդ դեպքում նա, նորույթին նախնական ծանոթացման ընթացքում, ապահովագրված է լինում գաղտնի տեղեկությունների (նոու-հաու) հնարավոր արտահոսքի հետ կապված պատասխանատվությունից:

Արտոնագրային հավասարակշռված համակարգը, փաստորեն, ամրագրում է նոր տեխնոլոգիական հնարավորությունները՝ միաժամանակ որոշակի հիմքեր ստեղծելով մասնակի տեխնոլոգիական նորամուծությունների (կատարելագործումների) համար: Բացի այդ, դրա հիման վրա տեղի է ունենում անցում առաջադիմական և մրցունակ արդյունաբերության տեխնոլոգիական կառուցվածքի:

Ներկայացնենք որոշակի ամփոփ վիճակագրական տվյալներ ՀՀ մտավոր սեփականության ներուժի և դրա զարգացման միտումների վերաբերյալ, ինչպես նաև փորձենք համեմատականներ անցկացնել այլ երկրների, մասնավորապես՝ ԱՊՀ երկրների հետ.

Աղյուսակ 1

ՀՀ գյուտերի և օգտակար մոդելների հայտերի հանրագումարը 1993-2010 թթ.²


Տարեթիվ	Գյուտերի և օգտակար մոդելների հայտեր		
	ընդամենը	ազգային	օտարերկրյա
1993	217	184	33
1994	233	154	79
1995	293	195	98
1996	316	162	154
1997	118	62	56
1998	83	75	8
1999	128	112	16
2000	128	120	8
2001	168	153	15
2002	222	214	8
2003	161	156	5

² <http://www.aipa.am/am/>

2004	144	129	15
2005	231	226	5
2006	214	213	1
2007	147	140	7
2008	239	233	6
2009	168	157	11
2010	187	177	10
Ընդամենը	3397	2862	535


Ըստ աղյուսակ 1-ի՝ 1993 թ. մինչև 2010 թ., հայտատուների կողմից ՄՄ իրավունքների գործակալություն տրվել է 3397 գյուտերի և օգտակար մոդելների հայտ, որից 2862-ը՝ ազգային, իսկ 535-ը օտարերկրյա հայտատուների հայտերն են: Պետք է նշել, որ 1997-1998 թթ. նկատվել է հայտատուների քանակի կտրուկ անկում, որը կրկնվել է նաև 2004 և 2006 թվականներին: Նկատվել է նաև օտարերկրյա հայտատուների հայտերի զգալի անկում 1996 թ. ի վեր, որի հիմնական պատճառը կարող է լինել 1996 թ. հուլիսի 27-ին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ ամրագրված տուրքերի դրույքաչափերի քառապատկումը:

Գծապատկեր 1-ի և 2-ի միջոցով ներկայացված է արտոնագրված գյուտերի և օգտակար մոդելների քանակների շարժընթացը:



Գծապատկեր 1. Արտոնագրված գյուտերի շարժընթացը ըստ 1993-2010 թթ. տվյալների

Կարելի է նկատել, որ մեր երկրում այս գործընթացը 1993-2000 թթ. որոշակի վերելք է արձանագրել, որին հաջորդող 10 տարիներին տեղի է ունեցել կայունացում: Ընդ որում՝ այդ գործընթացին բնորոշ է սինուսիդային հետազիծը: 1993-2010 թթ. ՀՀ-ում ընդհանուր առմամբ արտոնագրվել է 2265 գյուտ, որից 2022-ը՝ պատկանում են ազգային, իսկ 243-ը՝ օտարերկրյա հայտատուներին: Միևնույն ժամանակաշրջանում արտոնագրվել է 220 օգտակար մոդել, որից 200-ը՝ ազգային, 20-ը՝ օտարերկրյա հայտատուներից:



Քծապատկեր 2. Արտոնագրված օգտակար մոդելների շարժընթացն ըստ 1993-2010 թթ. տվյալների

Քծապատկեր 1-ից և 2-ից երևում է, որ արտոնագրման հայտերի տրման, ինչպես նաև արտոնագրերի տրամադրման գործընթացն ակտիվ է եղել 2005-2006 թթ., ինչպես նաև 2008 թ.: Թե որքանով է ՀՀ-ում արտոնագրման գործընթացը կրել 2008-2009 թթ. տնտեսական ճգնաժամի ազդեցությունը, հնարավոր է բացահայտել խորքային հետազոտությունների արդյունքում, սակայն առկա վիճակագրական տվյալները վկայում են ուղիղ համեմատական կապի մասին: Ընդ որում՝ այդօրինակ կապի մասին են վկայում նաև Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO/ՄՄՀԿ) տվյալները:

Եթե փորձենք համեմատել Հայաստանի և նախկին ԽՍՀՄ երկրների մմանատիպ ցուցանիշները, ապա կհանդիպենք համանման զարգացումների: Ըստ Գ. Ստեպանենկոյի՝ Բելառուսում արտոնագրային հայտերի աճ է նկատվել 2002-2007 թթ.: 2007 թ. դրանց թիվը հասել է 1662-ի, որը գրեթե 41%-ով ավելի է 2002 թ. միևնույն ցուցանիշից³:

ՄՄՀԿ վիճակագրական տվյալների համաձայն՝ 2008 թ. ԱՊՀ երկրների արտոնագրման հայտատուների քանակը ունեցել է հետևյալ պատկերը.

**Աղյուսակ 2
ԱՊՀ երկրների գյուտերի և օգտակար մոդելների քանակի ցուցանիշներ (2008 թ.)⁴**

Երկիր	Գյուտերի և օգտակար մոդելների հայտեր		
	ընդամենը	ազգային	օտարերկրյա
ՌԴ	41,849	27,712	14,137
Ուկրաինա	5,697	2,825	2,872
Բելառուս	1,730	1,510	220
Ղազախստան	448	262	186
Մոլդովա	295	273	22
Ադրբեջան	230	226	4

³ Ст'ю Система патентных судов Беларуси, Степаненко Дмитрий, Номер 4(74), 2009:

⁴ Ст'ю WORLD INTELLECTUAL PROPERTY INDICATORS, 2010 Edition.

<http://www.wipo.int/export/sites/www/ipstats/en/statistics/patents/pdf/9412010.pdf>

Ուզբեկստան	227	222	5
Հայաստան	173	11	162
Դրոգստան	138	135	3
Տաջիկստան*	-	-	-
Թուրքմենստան*	-	-	-

* Տվյալների անկատարության պատճառով ցուցանիշները բացակայում են:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, Ռուսաստանի Դաշնությունը արտոնագրման հայտերի ցուցանիշով ԱՊՀ երկրների մեջ առաջատար դիրք է գրավում: ՌԴ դիրքն առաջատար է նաև միջազգային ասպարեզում. զբաղեցնում է 6-րդ տեղը՝ Միացյալ Նահանգներից (456.321), Ճապոնիայից (391.002), Չինաստանից (289.939), Հարավային Կորեայից (170.632) և Գերմանիայից (62.417) հետո: ԱՊՀ երկրների շարքում այս ցուցանիշով բարձր տեղեր են զբաղեցնում նաև Ուկրաինան և Բելառուսը:

Աղյուսակ 3

ԱՊՀ երկրների ապրանքային նշանների հայտերի հանրագումարը (2008 թ.)⁵

Երկիր	Ապրանքային նշանների հայտեր		
	ընդամենը	ազգային	օտարերկրյա
ՌԴ	57,165	30,024	27,141
Ուկրաինա	33,019	18,496	14,523
Բելառուս	11,454	3,487	7,967
Ղազախստան	8,407	1,851	6,556
Սոլովովա	6,662	1,581	5,081
Ադրբեջան	5,609	908	4,701
Ուզբեկստան	5,007	1,204	3,803
Հայաստան	4,735	939	3,796
Դրոգստան	3,966	239	3,727
Տաջիկստան	3,044	259	2,785
Թուրքմենստան	-	-	2,819


Եվս մեկ հատկանշական ցուցանիշ է ապրանքային նշանների և ֆիրմային անվանումների հայտերի և դրանց գրանցումների վիճակագրական տվյալների ամփոփումը: ՀՀ-ում 1994 թ. ի վեր ներկայացվել են 65.169 ապրանքային նշանների հայտեր, որոնց 16%-ը օտարերկրյա հայտատուներին է: Ընդհանուր առմամբ գրանցվել է 16.261 ապրանքային նշան:

Ինչպես երևում է աղյուսակից, Հայաստանը ԱՊՀ 11 երկրների շարքում ընդամենը 8-րդն է: Պետք է նշել նաև, որ Հայաստանում մեծ տեսակարար կշիռ են կազմում օտարերկրյա ապրանքային նշանների հայտատուները. ընդհանուրի գրեթե 80%-ը:

Մտավոր սեփականության արտոնագրման հաջորդ կարևոր ցուցանիշը վերաբերում է արդյունաբերական մոնուշների հայտերի ներկայացմանը և գրանցմանը: Ըստ ՀՀ մտավոր սեփականության գործակալության

⁵ Տե՛ս նույն տեղը:

տվյալների՝ մեր երկրում 1995-2010 թթ. գրանցվել է 279 արդյունաբերական նմուշների հայտ. 132-ը՝ ազգային, 147-ը՝ օտարերկրյա: Այս առումով որոշակի աճ է նկատվել 2004-2006 թթ., ինչպես նաև 2009 թ.:



Գծապատկեր 4. Արդյունաբերական նմուշների հայտերի շարժմը ըստ 1993-2010 թթ. տվյալների

ՄՍՀԿ ցուցանիշներից հատկանշական են նաև արտոնագրային ակտիվության ինտենսիվության (Intensity of patent activity) կամ ՀՆԱ՝ մեկ շնչին բաժին ընկնող հայտերի քանակը և հայտերի թիվն ըստ գիտահետազոտական ու փորձարարական-նախագծային աշխատանքների (ՔՏՓՆԱ) ծախսերի մասնաբաժնի (Resident Applications per R&D Expenditure): Առաջին ցուցանիշով ՀՀ-ն ԱՊՀ երկրների մեջ 3-րդ տեղում է (13.1 գործակից). զիջում է Բելառուսին (13.8) և ՌԴ-ին (13.3), առաջ է Ուկրաինայից (9.1), Ուզբեկստանից (3.9) և Ադրբեջանից (3.2): Սակայն երկրորդ ցուցանիշով Հայաստանը դուրս է մնում այդ ցուցակից՝ չհասնելով անգամ գործակցի 0.1 նիշին: ԳՏԱ ծախսերի մասնաբաժնում բարձր ցուցանիշներ են ապահովում Բելառուսը (1.6), Ռուսաստանը (1.3) և Ուկրաինան (1.1)⁶: Ըստ նշված հաշվետվության՝ Հայաստանի, Ադրբեջանի, Ռումինիայի և Թուրքիայի գործակալությունները գրանցել են օտարերկրյա հայտատուների և գրանտային ներդրումների ամենացածր ցուցանիշները՝ 8%-ից ցածր⁷:

Դիտարկվող թեմայի շրջանակներում հետաքրքիր է նաև տրված և գործող արտոնագրերի վիճակագրությունն ըստ միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ-), որը աստիճանակարգված համակարգ է և օգտագործվում է արտոնագրային փաստաթղթերի դասակարգման և որոնման նպատակով: Դա կիրառվում է նաև որպես գործիք՝ տեղեկություններ ընտրելու և տարածելու, ինչպես նաև տեխնոլոգիայի զարգացման մակարդակը որոշակի բնագավառներում պարզելու համար: ՄԱԴ-ը բաղկացած է 8 հիմնական բաժիններից.

⁶ Տե՛ս WORLD INTELLECTUAL PROPERTY INDICATORS, 2010 Edition , էջ 43:
http://www.wipo.int/export/sites/www/ipstats/en/statistics/patents/pdf/941_2010.pdf

⁷ Տե՛ս նույն տեղը:

ՄԱԴ-ի դասակարգումն ըստ բաժինների

A	Մարդկային կենսական անհրաժեշտ նյութեր
B	Տեխնոլոգիական գործընթացներ. փոխադրում/տեղափոխում
C	Քիմիա, մետալուրգիա
D	Տեքստիլ, թուղթ
E	Շինարարություն
F	Մեխանիկա, լուսավորում, ջեռուցում, գենք և զինամթերք, պայթուցիչ աշխատանքներ
G	Ֆիզիկա
H	Էլեկտրականություն

Ըստ նշված դասակարգման՝ ներկայացնենք վերջին 10 տարիներին ՀՀ տարածքում արտոնագրված արդյունաբերական սեփականության օբյեկտների արտոնագրերի քանակի շարժը.

**2001-2010 թթ. ազգային (ա) և օտարերկրյա (օ) արտոնագրերն
ըստ ՄԱԴ-ի դասակարգման⁸**

	2001		2002		2003		2004		2005		2006		2007		2008		2009		2010		Ընդ.	
Դաս	ա	օ	ա	օ	ա	օ	ա	օ	ա	օ	ա	օ	ա	օ	ա	օ	ա	օ	ա	օ	ա	օ
A	53	7	64	4	42	0	36	3	61	1	65	0	33	1	41	0	56	2	43	4	494	22
B	9	2	22	0	22	1	30	9	38	4	27	1	16	1	28	0	23	2	24	1	239	21
C	31	0	51	2	30	2	25	0	49	0	43	0	36	2	79	1	26	2	39	0	409	9
D	6	0	2	0	1	0	3	0	0	0	1	0	1	0	0	0	2	0	0	0	16	0
E	5	3	9	2	13	1	3	0	21	0	17	0	12	0	13	2	12	0	18	3	123	11
F	11	1	19	0	15	0	11	3	24	0	22	0	18	1	23	2	15	1	33	0	191	8
G	21	2	18	0	20	0	10	0	25	0	27	0	15	2	33	1	22	4	12	0	203	9
H	47	0	29	0	14	1	11	0	8	0	11	0	9	9	16	0	16	0	9	2	170	11

Ըստ աղյուսակի տվյալների՝ արտոնագրերի հիմնական մասը կենտրոնացած է A և C բաժիններում, D-ն և E-ն բավական զիջում են մյուս բաժիններին: Կարող ենք փաստել, որ ներկայումս հայ գյուտարարների ուշադրությունը սևեռված է մարդու կենսական պահանջմունքների բավարարմանը, քիմիական և մետաղագործական ոլորտների գյուտերի մշակմանն ու արտոնագրմանը: Միևնույն պատկերն է նաև օտարերկրյա սուբյեկտների շրջանում. հարաբերականորեն բարձր են ցուցանիշները ՄԱԴ-ի այս երկու բաժիններում:

Հայաստանյան մտավոր սեփականության ցուցանիշների քննարկումն ավարտենք լիցենզային և զիջման մասին պայմանագրերի վիճակագրական տվյալներով, որոնք ներկայացված են աղյուսակ 6-ում:

⁸ Տե՛ս <http://www.aipa.am/am/>

Ըստ աղյուսակի տվյալների՝ 2001-2010 թթ. գրանցվել են 876 պայմանագրեր, որոնց գերակշիռ մասը ապրանքային նշանների զիջմանը վերաբերողներն են: Բավականին փոքր է գյուտերի արտոնագրերի զիջման, արտոնագրային հասարակ և բացառիկ լիցենզիայի տրամադրման մասին պայմանագրերի տեսակարար կշիռը: Նշենք, որ ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջև:

Աղյուսակ 6

Լիցենզային և զիջման մասին պայմանագրերի փոխանցություն⁹

Տարեթիվ	Գրանցվել են պայմանագրեր	Ապրանքային նշանների զիջման մասին	Ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին	Գյուտի արտոնագրի զիջման, արտոնագրային հասարակ լիցենզիա և արտոնագրային բացառիկ լիցենզիա տալու մասին
2001	64	59	3	2
2002	70	56	12	2
2003	68	53	14	1
2004	69	60	8	1
2005	103	79	19	5
2006	134	104	21	9
2007	95	77	15	3
2008	85	60	20	5
2009	97	68	23	6
2010	91	69	15	7
Ընդամենը	876	685	150	41

Նշենք, որ 2011-ին ՀՀ Կառավարությունը հավանություն է տվել մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ռազմավարությանը, որը վերաբերում է մտավոր սեփականության իրավունքներին առնչվող հայեցակետերին՝ որպես ՀՀ առևտրային և արդյունաբերական ընդհանուր քաղաքականության մաս: Այս ռազմավարության շրջանակներում ակնկալվում են մի շարք բարեփոխումներ, որոնց նպատակն է «մշակել ՄՄ իրավունքների կիրարկման առավել արդյունավետ ընթացակարգեր և բարձրացնել հասարակության իրազեկման մակարդակը ՄՄ իրավունքների ոլորտում»:

Բարեփոխումների շարքում էական տեղ են զբաղեցնում ԵՄ համագործակցության խորացման նպատակով եվրոպական հարևանության քաղաքականության չափորոշիչների որդեգրումը և օրենքների համապատասխանեցումը, ինչպես նաև որոշակի ինստիտուցիոնալ փոփոխությունները: Եվրոպական հարևանության քաղաքականության միջոցով Հայաստանին առաջարկվում է տնտեսական և մշակութային կապեր հաստատել ԵՄ երկրների հետ, ընդլայնել տարածաշրջանային և սահմանային համագործակցությունն ու առևտուրը, որը ենթադրում է նաև մտավոր սեփականու-

⁹ Տե՛ս նույն տեղը:

թյան վերաբերյալ օրենքների վերանայում, լրամշակում և համապատասխանեցում:

Չնայած վերջին տարիների բարեփոխումներին, ՀՀ Կառավարությունն արձանագրում է մի շարք խնդիրներ՝ կապված ՄՄ իրավունքների պաշտպանության հետ, որոնք լուծում են պահանջում. կեղծարարության և ցանցահեռության մակարդակի նվազեցումը, ազգային օրենսդրության մոտարկումը ԵՄ չափանիշներին, ՄՄ իրավունքների պաշտպանության օրենսդրության արդյունավետ կիրարկման ապահովումը, ՄՄ իրավունքների քաղաքականության և կիրարկման համար պատասխանատու պետական մարմինների և լայն հասարակության իրազեկման մակարդակի բարձրացումը: Սակայն առկա խնդիրները չեն սահմանափակվում միայն թվարկվածներով: Մեր կարծիքով դեռևս կան լուծման կարիք ունեցող կարևոր խնդիրներ՝ արտոնագրման ինչպես պարզ, այնպես էլ մատչելի ընթացակարգի ապահովումը, համանման երկրների փորձի ուսումնասիրությամբ մեր տնտեսությանը հարիր իրավաօրենսդրական ակտերի մշակումը և գործադրումը, որոշակի գրանտային ծրագրերի ներդրումը, որը կնպաստի գյուտերի և օգտակար մոդելների ոչ միայն գրանցմանը, այլև տնտեսությունում դրանց կիրառությանը:

Սակայն, կարծում ենք, ԵՄ չափորոշիչներին համապատասխանեցումը այս ոլորտում կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն, քանի որ տվյալ դեպքում մենք փորձում ենք որդեգրել զարգացած երկրների քաղաքականությունը և օրենսդրական ակտերը՝ հաշվի չառնելով մեր տնտեսության առանձնահատկությունները:

АТОМ МАРГАРЯН, СУСАННА ХАЧАТРЯН - *Потенциал и тенденции развития интеллектуальной собственности Республики Армения.*- В статье представлен экономический анализ процесса создания и распространения объектов интеллектуальной собственности Республики Армения. Обоснован тезис, согласно которого формирование экономики основанной на знания для РА, не имеет альтернативы, так как не обладая природными ресурсами и находясь в транспортной блокаде, страна сможет развиваться только на базе конкурентоспособных наукоёмких производств и услуг, основанных на эффективной системе коммерциализации объектов интеллектуальной собственности.

В статье проанализированы теоретические и практические проблемы создания, передача и юридическая защита изобретений, полезные модели и другие объекты интеллектуальной собственности РА. На основе проведённого анализа и мониторинга международного опыта в данной области сделаны некоторые предложения, касающиеся совершенствования системы защиты интеллектуальной собственности РА.

ATOM MARGARYAN, SUSANNA KHACHATRYAN -*Potential and trends of intellectuall property of the RA.*- This paper presents an economic analysis of the creation and distribution of the objects of intellectual property of the Republic of Armenia. It was argued that the formation of knowledge-based

economy had no alternative for Armenia: the country that does not possess natural resources and being in economic blockade can be developed based on the effective commercialization of objects of intellectual property and competitive science.

In this paper the theoretical and practical problems of creation, legal protection and transmission of inventions, useful models and other objects of intellectual property have been analysed. Based on this research and the consideration of international practice in this area, several suggestions have been made which are directed to the improvement of the system of intellectual property of the Republic of Armenia.